

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

03.07.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Դուբաթյանը, Ա.Ադրյանը, Վ.Դոխոյանը, Հ.Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Տ.Էվինյան - մարզպետի օգնական

Օրակարգում`

1. Անցյալ ժամանակաշրջանում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հանձնարարվեց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բաղդյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`

«Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում ըստ ոլորտների և ծառայությունների ինտենսիվ աշխատանքներ իրականացնել համայնքների ղեկավարների, տնտեսվարող սուբյեկտների և ազգաբնակչության հետ աղբահանության պայմանագրերի կնքման, վարձավճարների գանձման, ինչպես նաև վարչական վերահսկողության ու ներքին աուդիտի սահմաններում, համեմատական վերլուծություններ կատարել և ամսական կամ եռամսյակային կտրվածքով ներկայացնել տեղեկատվություն:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Թադևոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության վարչության պետ Գ. Հակոբյանին`

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել Տաշիրի տարածաշրջանի «Բոզոյան» ՍՊԸ-ի զարգացման ծրագիրը եռօրյա ժամկետում ՀՀ Տարածքային Կառավարման և Զարգացման և ՀՀ Գյուղատնտեսության նախարարություններ ներկայացնելու ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բաղդյանին, աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա.Օհանյանին`

Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզի համայնքների կողմից վարձակալության պայմանագրերի կնքման և վարձավճարների գանձման նկատմամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ.Ասլանյանին՝

ՀՀ Տարածքային Կառավարման և Զարգացման նախարարության համապատասխան ծառայությունների հետ քննարկել մարզի գյուղական բնակավայրերի 1 սենյակի հավակնող թվով 10 շահառուների բնակապահովման խնդիրը:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին՝

ՀՀ Կրթության և գիտության նախարարության համապատասխան ծառայությունների հետ քննարկել ուսումնական հաստատությունների ռացիոնալիզացման վերաբերյալ առաջարկները, ֆինանսական հիմնավորվածությունները և ներկայացնել վերջնական առաջարկություններ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

Առողջապահական ոլորտի համեմատական վերլուծությունների հիման վրա կատարել ուսումնասիրություններ և առողջապահության նախարարության հետ համագործակցության արդյունքների հիման վրա ներկայացնել առաջարկություններ օպտիմալացման և մասնավոր կառավարման ինստիտուտի ներդրման վերաբերյալ:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝

ա) 1 շաբաթյա ժամկետում ճշգրտել և ներկայացնել տեղեկատվություն Լոռու մարզպետարանի կողմից ներկայացված ներդրումային ծրագրերի ընթացքի վերաբերյալ:

բ) Վանաձորի քաղաքապետարանի հետ անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել և 10-օրյա ժամկետում ներկայացնել Վանաձոր քաղաքի տուրիզմի զարգացման հեռանկարային ծրագրերը:

8. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

ՀՀ Տարածքային Կառավարման և Զարգացման նախարարություն ներկայացնել հրատապ ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ և ամենօրյա հսկողություն սահմանել իրականացվող շինարարական աշխատանքների կատարման ընթացքի նկատմամբ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ԱՍԼԱՆՅԱՆ